

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 3

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

25 նոյեմբերի 2020թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 22-ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի» գիտակրթական կենտրոնի 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի քննարկման և հաստատման հարցը: **Ձեկուցող՝ Ա. Սաղյան**
2. ԵՊՀ գիտական խորհրդին անդամակցելու համար Ֆարմացիայի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից թեկնածուի առաջադրման հարցը: **Ձեկուցող՝ Ա. Սաղյան**
3. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Անի Դադայանի կողմից ներկայացված «Գալենային և նորգալենային դեղապատրաստուկների արդյունաբերական արտադրությունը» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը: **Ձեկուցող՝ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Ա. Հովհաննիսյան**
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի» գիտակրթական կենտրոնի 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով գիտխորհրդի անդամներին մանրամասն ներկայացրեց ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի» գիտակրթական կենտրոնի 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը: Նա նշեց, որ կենտրոնը հնարավորություն կընձեռի նաև նոր մագիստրոսական ծրագրերի արդյունավետ իրականացմանը և միջազգային չափորոշիչներին համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը: Ա. Սաղյանը հաղորդեց նաև, որ ինստիտուտի ամբիոնների կողմից կազմվել են նոր մագիստրոսական ծրագրերի հայտերը՝ Դեղերի որակի հսկում և մոնիթորինգ, Կլինիկական դեղագիտություն, Արդյունաբերական դեղագիտություն, Դեղատնային դեղագիտություն մասնագիտացումներով:

Ելույթ ունեցան՝ Ելույթ ունեցան գիտխորհրդի անդամներ Բ.Գ.Պ. Ռ. Հովհաննեսյանը, Կ.Գ.Պ. Ս. Բադալյանը, Պ.Գ.Պ. Ն. Չիչոյանը, Պ.Գ.Թ. Ա. Սահակյանը, ովքեր դրական արտահայտվեցին «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի» գիտակրթական կենտրոնի 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի, ինչպես նաև նոր մագիստրոսական ծրագրերի հայտերի վերաբերյալ:

Որոշեցին՝

1. Հավանություն տալ Ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի» գիտակրթական կենտրոնի 2020-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրին:
2. Նոր մագիստրոսական ծրագրերի հայտերը ներկայացնել ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն:
2. ԵՊՀ գիտական խորհրդին անդամակցելու համար Ֆարմացիայի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից թեկնածուի առաջադրման հարցը: Ջեկուցող՝ Ա. Սաղյան

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանին, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց այն մասին, որ ԵՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամների կազմը ձևավորելու համար ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պետք է ներկայացվեն թեկնածուներ:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն Ս. Վարդապետյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, Ֆարմքիմիայի և ֆարմակագնոգիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը, դոցենտ Ս. Ափոյանը, Ֆարմացիայի ինստիտուտի ՈւԽ նախագահ, 4-րդ կուրսի ուսանողուհի Է. Մարկոսյանը, ովքեր առաջարկեցին Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ. Ռուբեն Հովհաննեսյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով վերջինիս հարուստ գիտամանկավարժական փորձը և մարդկային բարձր արժանիքները:

Ռուբեն Հովհաննեսյանը հանդիսանում է «Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ, անդամակցում է «Պարոնֆիզիոլոգների համաշխարհային ընկերությանը», «Բժշկական ամսագրերի խմբագիրների համաշխարհային միությանը»: Վերջին 10 տարում զբաղվում է նաև Հայաստանի առողջապահության համակարգում ապացուցողական բժշկության ներդրման հիմնախնդիրներով:

Որոշեցին՝ (Բաց քվեարկությամբ – կողմ՝ 22, ձեռնպահ՝ 0, դեմ՝ 0) առաջադրել Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ. Ռուբեն Հովհաննեսյանի թեկնածությունը՝ ԵՊՀ գիտական խորհրդին անդամակցելու համար:

3. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Անի Դադայանի կողմից ներկայացված «Գալենային և նորգալենային դեղապատրաստուկների արդյունաբերական արտադրությունը» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը, ով նշեց, որ Ա.Ս. Դադայանի կողմից ներկայացված աշխատանքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման: Ելույթ ունեցավ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ.

դոցենտ Ա. Հովհաննիսյանը, ով հաղորդեց ներկաներին, որ աշխատանքի արտաքին գրախոսներ (ԵՊԲՀ Դեղերի տեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, ք.գ.թ. Բագրատ Ջանիկի Ենոքյանը և «Արփիմեդ» ՍՊԸ դեղագործական ընկերության որակի կառավարիչ դ.գ.թ. Անի Վաչագանի Ղազարյանը) կարևորել են ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը բակալավրիատում դասավանդվող «Ֆարմտեխնոլոգիա-1 (գործարանային)» առարկայի համար և ձեռնարկում առկա թերությունները շտկելուց հետո՝ այն երաշխավորել տպագրության:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով վերոնշյալ ձեռնարկի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի համար՝ այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան